



թող կականամար սրտառուչ ոգով յաղթաթոր յառաջընթաց Պիսիբոն եւ Աս Սրէ՞ս պակամար այտո (°) Ի Դեմետրի բեկբեկեալ ըբարբառդ լեզուի, հողոյ ահամբ տեսեալ զՏէր ամենի Ի զէմ յանդիման խաւսերով ընդ նմայ Ի մարմնի. ըստ քո հողոյ ահամբ ըբարբառդ Գրիգոր Նարեկացի անլուելի միշտ Ի յանդրի, ամենայնի որք գոյացեալ են Ի յանգոյնէ երեւելիք եւ աներեւոյթք, Ի յայն սոսկալի ժամու աղաւթիցն յիշեսջիք զբարձամեղս զՆիկալ եւ զճնաւղս իմ Ի յորդէիս եկեղեցոյ եւ զբանի սպասաւորս զՅով. յիշեսջիք:

Թղ. 233բ. Զմեղուցեալ զբիւս զՆիկալ եւ զբանի սպասաւորս զՅով. յիշեսջիք լաղաւթս, ով բարէմիտ ընթերցաւըք:

Սկիզբը գտնուած կէս թուղթ մագաղաթեայ պահպանակը բուն մետրոպեան երկաթազրով կը պարունակէ Դուկ. ԺԲ. 27—30, 32—35:

18.

ԹՈՎԱՄԱՅԻ ԱԳՈՒԻՆԱՑԻՈՅ ՅԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՑ

Հին Թիւ 20: 1418էն յառաջ:

ԹՈՒՂԹՔ՝ 168: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,7. X 14,5 հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂ. ՊԱՀՊԱՆԱԿ՝ չկայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ. կրած է քարերու ետեւաւաչուրիւն: — ԴԱՏԱԲԿ՝ 83ա. քղ. 138բ—139ա (գրչափորձ). 168բ (մարտուք): — ԳԻՐ՝ նոտրագիր: — ԽՈՐԱՆ, ԿԻՍԱԽՈՐԱՆ, ՆԿԱՐ, ԶԱՐԴԱԳԻՐ, ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԴ՝ չկան: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1418էն յառաջ: — ՏԵՂԻ՝ անձամբ: — ԳՐԻՉ՝ Մեծպարոն սարկաւագ:

Մատենան է Թովմայի Ազուինացոյ յաղագս Խորհրդոց. ուր կան նաեւ Բանք Իմաստասիրաց եւ այլն:

1. Թղ. 1ա. Թովմայի Ազուինացոյ յաղագս Հաւատոց: Խորագիր չունի. բայց յաջորդ հատուածին խորագիրն եղած ըլլալու է թղ. 110ա տեսնուած ինքնակայ կարմրագիրն. «Զի՞նչ է հաւատ կամ զինչ է սահման հաւատոյ եւ քանի՞ են աստիճանք հաւատոյ», որուն սկիզբն է թղ. 1ա. «Հաւատ ըբարբառդ անընթեանի լի է, զի հաւատն ունի չորեքտասան աստիճան ըբարբառդ: Առաջին աստիճան է հաւատ ըբարբառդ...»: Ստորին լուսանցքի վրայ նոր գրչէ. «Թու՛մայի Ազուինացոյ»: Այս մասը կ'աւարտի

Թղ. 4ա. «Եւ այսպէս հաւատն է գործնական իմացումն: Եւ այսպէս յայտնի եղեւ երկրորդ հարցուածն»:

2. Թղ. 4բ. Խնդրի թէ զի՞նչ է բնութիւն եւ կամ քանի՞ յեղանակաւ ասի: Պատասխանի. Ասեմ թէ անունս այս բնութիւն զբարձուս նշանակէ...:

Բ. Թղ. 24ա. «Խնդրի թէ զինչ է անձն: Պատասխանի. Ասեմ թէ անձն հասարակաց ասեալ ոչ կարի սահմանել...»: Այս մասը կ'աւարտի թղ. 63ա. «Իսկ բժշկութիւն բո՛րոտին էր գործն աստուածային. եւ այլ այսպիսիք»:

3. Թղ. 63բ, 66բ, 109բ, 137բ—139ա նախնարար դատարկ էջեր էին. յեանագոյն անվարժ գրիչ մը օրինակած է այս էջերու վրայ «Աղաւթք Ներսիսի Հայոց կաթողիկոսի (տե՛ս թղ. 63ա Ի լուսանցս) Հաւատով խոստովանիմ...»:

4. Թղ. 64ա—66ա. Յանկ Թովմաս Ազուինացոյ յաղագս Մկրտութեան, Պատարագի եւ Թրիստութեան գլուխներու եւ հատուածներու: Կը սկսի.

ա. Խնդրի թէ Մկրտութիւնն Յովհաննու խորհուրդ էր... (Ա.—ԽԴ):

Բ. Յանկ Փրա Թումարի գրոցն. Երրորդ յաղագս Պատարագի:

Ա. Թէ յորժամ յամենայն խորհուրդ(ս) երիսս այս տեսանի... (Ա. ԻԷ):

Գ. Հարցումն թէ օրէնքն Մովսէսի գործովք իւրովք տա՞յր զչնորհս եւ կամ արժարացուցանէ՞ր թէ ոչ... (Ա.—ԺԳ):

Ա. Թղ. 67ա—82բ (ԽԴ. խնդիրն կը թուի թէ անաւարտ մնացած է, որովհետեւ 6 տող ունինք միայն. իսկ թղ. 83ա դատարկ է:

Բ. Թղ. 83բ—99ա. (ԻԷ. խնդիրն կ'աւարտի. «ապա ուրեմն յանկարծ լինի փոփոխումս այս»:

Գ. Թղ. 99բ—109բ. Կ'աւարտի. «բայց եթէ ոք ասիցէ, թէ գոհեալ է միս (ուտ)իցէք»:

5. Թղ. 110ա. Այս տեղ է կարմրագիրն «Զինչ է հաւատ...». տես § 1: Կ'ամ այս կարմրագիրը վերը փոխադրելու է եւ կամ վերինը (թղ. 1ա—4բ) հոս զետեղելու է:

6. Թղ. 110ա. Արիստոտելի Ժ. Ստորագութիւն: Գոյացութիւն, Որակ...: Գոյացութիւն ասի Երկին. գոյացութիւն Արեգակն եւ Լուսին...:

7. Թղ. 112ա. Դաւթի փրկիստիայի էակաց զիրք: Ի քանի՞ս բաժանի էակն կամ յորս: Երկակի. Ի գոյացութիւն եւ Ի պատահումն...: Վջ. Հոգի եւ միտք եւ շունչ բնութեամբ եւ զանազանութեամբ այլ եւ այլ:

8. Թղ. 117բ. Վկայութիւն մարգարէից եւ հայրապետաց յաղագս Քրիստոսի, որ հանդերձեալ էր կատարել յետին ժամանակս: Եթէ յառաջ քան զյաւիտեանս Որդի ծնաւ Ի Հաւրէ. Դաւիթ ասէ. Յառաջ քան զյաւիտեանս ծնա զքեզ...: Վջ. 121բ. Եթէ մեղաւորացն անվարձան պատրաստին տանջանքն. Եսայի. Ելցեն եւ տեսցեն զսոսկերս առ իս յանցուցելոցն...:

9. Թղ. 122ա—123ա. Անխորագիր. Վճիռք իմաստնոց: Անբան մտացն արբանեակ, զի զոր կամին միտք՝ բանն թարբմանէ: Վասն մարմնոցն մարդն մակհանաջու. բայց վասն բանին՝ անմահ...: Վջ. Ո՛ցու. որպէս զի գեղեցիկ են դատաստանք մահ, որպէս զի գեղեցիկ են դատաստանք քո կարաւտելոյ առն եւ նուագելոյ Ի գաւրութեանէ:

10. Թղ. 123բ. Բանք իմաստ(աս)իրականք: Մարդոյ զուարճացելոյ որդիս եւ կենդանոցն որ տեսցէ զբեկումն թշնամեաց...: Վջ. Դուտար հաւր Ի ծածուկ տքնութիւն է:

11. Թղ. 124ա. Յաղագս ծառայից Ի Սո՛ղոմոնէ: Ծառայի իմաստնոյ աջողեսցին զործ(ք) իւր եւ ուղ(ղ)եսցին ճանապարհք նորա...: Վջ. Ընդ արիւնահանս համարեսցի որ հատանէ զվարձկան Ի վարձ: Առակք ԺԳ. 13: Սիրաք ԼԱ. 27:

12. Թղ. 124ա. Բանք խրատականք: Մարդ որ յաղմուկ սովոր է, սատանայի նման է. զի սատանա բարի ոչ լինի եւ ոչ մարդն այն խաղաղարար...: Վջ. Կեանք մարդոյ ուրախութիւն սրտի:

13. Թղ. 125ա. Այլ բանք իմաստասիրաց (վասն չար կնոջ): Դիողինէս ասէ. Սուր եւ պատերազմն ոչ եղեւ առանց կնոջ. անա Վկայէ Եղիոն...: (Բանք իմաստասիրաց, 48):

14. Թղ. 126ա. Վասն կնոջ չարի եւ լեզուանոյ: Ամենայն չարութիւն չար են. բայց չարութիւն կնոջ վերագոյն (հմմտ. Սիրաք, ին. 26)...: Վջ. Մի հայեր Ի կին չար, զի մեղք կաթէ Ի կնոջ շրթանց պողրճիկ... (Առակք, Ե. 3):

15. Թղ. 126ա. Աղանոցն շնորհք. ա. Որ

լեզի չունի. ...թ. Ի խաղոյ տեղի լայ կու լինայ:

16. Թղ. 126բ. Վասն կնոջ իմաստնոյ բանք պիտանի: Ուրախ լեր ընդ կնոջ մանկութեան քո... (Առակք, Ե. 18): Վջ. Ի շնորհս եւ Ի գեղեցկութիւն ցանկայ ակն եւ քան զերկոսին զսոսա կին զուարթ:

17. Թղ. 126բ. Յոհանու առաքելոյ: Որ ուրանայ թէ Յիսուս չէ Քրիստոս, նա իսկ է նեոն... (հմմտ. Ա. Յովհ. Բ. 22. 3 վճիռք):

18. Թղ. 126բ—127ա. Լաւ է մին արդար որ առնէ զկամս Աստուծոյ, քան զբիւր անարէն: Թագաւոր արդար կանգնէ զաշխարհ...: Վջ. Թագաւոր այսաւր է եւ վաղիւ մեռանի:

19. Թղ. 127ա. Յաղագս տղայոց խրատք իմաստ(սիրաց): Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր...:

20. Թղ. 127բ. ՅԱռակաց է բանքս: Հայհոյիչ է որ բարկացուցանէ զհայր իւր...:

21. Թղ. 128ա. Խրատք վասն բարեկամաց Ի Սիրաքէ: Մի վրիպիր Ի բարեկամէ...: Ի Սիրաքս է բանքս...:

22. Թղ. 128բ. Խրատք վասն աւկտութեան: Պիթագորաս ասէ. Զմեղս քո մի փութացիւ ծածկել բանիւք...:

23. Թղ. 129բ—130ա. Յաղագս կանանց խրատք իմաստնոյ: Պիթագորաս ասէ. Ի խայտառակութեան: Պիթագորաս ասէ. Ի չուր եւ Ի կին անկանելն մի է. զի նոյն արտէ պատճառն...: Վջ. Դիողինէս ասէ. Տեսի կին մի պտուռ ծառուրեալ...:

Հրտ. Բանք իմաստասիրաց. Սովերք Հայկականք, Ա. 55—59:

24. Թղ. 130բ. Զրաք աւրինացն Յովանէս... չորս տող Ոտանաւոր. նոյնը տե՛ս 132ա:

25. Թղ. 130բ. Յաղագս ստորասութեան, թէ բացասութեամբ եղին միաւորութիւնքն թէ ոչ: Պատասխանի. Ստորասութեամբ եւ բացասութեամբ... (Պէսպէս Հարցմունք, նաեւ Լուծմունք): Կը յաջորդէ. «Իսկ անստորագրականն՝ մակացութիւն է...» (Մահութիւն, Արհեստ, Մակացութիւն...):

26. Թղ. 131ա. (Յաղագս Մակացութեան): Եկեցուք այսուհետեւ Ի չորրորդ գլուխն եւ ասացուք, եթէ ոչ ոմանք են զլուսնայնոցն այսոցիկ տեսակաց: Եւ պարտ է զի տեղի գլխուկանն Փիւնիկեցիք գտին, եթէ զթուականն Փիւնիկեցիք գտին,

որպէս վաճառականք գործով եւ թուականութեան պէտս ունելով առ ի համարել: Իսկ գերատշառական՝ Թրակացիք, վասն զի անտի էր Որփեւս, զորմէ ասեն նախ գտանել գերատշառականն: Իսկ գլխաւորապէս յառաջին՝ Բաղդէացիք, վասն (ան)ամպ եւ հանապազաջինջ գործով յաւրոցն, զիւրաւ կարացին ընրոնել զշարժումն աստեղաց: Իսկ գերկրաչափականն՝ Եգիպտացիք գտին ի հարկէ, քանզի Նիւոս գետոյ ի ծովանալ ի վերայ Եգիպտոսի եւ խառնակել զասհմանս արտավարիցն՝ կռիւք եւ սպանմունք լինէին Եգիպտացոցն ի վերայ իւրաքանչիւր սահմանի, մինչեւ իմացան չափ մի, որում անուն էր սպանակ. զայն զնելով գտանէին զասհմանս իւրաքանչիւր արտավարաց. ուստի եւ ապա Երկրաչափութիւն գտաւ (Դաւիթ Անյաղթ, Սահմանք, էջ 199):

27. Թղ. 131բ. Եւ այս են է. Մորթրականքն ի վերուստ ի վայր սկսեալ: Զոհալ...:

28. Թղ. 132ա. (Տաղ ի Յովհ. Մկրտիչ). Ըրագ աւրինացն Յովանէս... (Ա. տունն նաեւ թղ. 130ա):

29. Թղ. 133ա—134ա (աւելի մանրագիր). Երէմիա մարգարէին վասն քաղաքին Երուսաղէմի: Յորժամ հանդերձեալ էին Բաղդէացիքն պաշարել զԵրուսաղէմ, խառնեցաւ Աստուած ընդ Երեմիայի...: Վջ. եւ գրեցին ի նմա, թէ վէմս այս աւգնական էր Երեմիայի: Գրեալ են ի գիրս Բարուքի: Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս:

Հրա. Արարատ, 1895, Մարտ. Յաւելում, էջ 1—8: Անվաւերական գիրք հին Կտակարանաց, Վենետիկ 1896, էջ 349—357:

30. Թղ. 134ա. Երանելոյն Եփրեմի ասացեալ ի Պաչն աստուած ընկալ: Աւրհնեացոք, եղբարք, զհրաշագործ տնաւրէնութիւն Միածնին եւ անճառ Բանին...: Վջ. Ուր տեսանես զնշան խաչին որ է աւրհնած եւ աւճած, անտ տես զխաչելեալն Քրիստոս ի վերայ:

Հրա. Ս. Եփրեմի Մատենագրութիւնք, Գ. 69—78:

31. Թղ. 135բ. (Օրհնութիւն Ժողովրդեան): Ով ամենաւրհնեալ Հայր երկնաւոր...:

32. Թղ. 136ա. Աղաւթք Մովսէսի Քերթովի ասացեալ: Աղաչեմ զքեզ, Տէր, թող զմեզս իմ որպէս եւ կամիմ...:

32. Թղ. 136բ. (Անխորագիր): Արգ

Աղամ եկաց ամս ԶԼ եւ մեռաւ: Մէթ՝ ԶԺԲ... (Նախահարք, Նահապետք): Վջ. Որք ասեն ի լինելութենէ աշխարհի մինչեւ ի ծնունդն Քրիստոսի լինել ամք ԲՆԻ մեծապէս վերկութեան յաւելելով զողկտութեան կարծիս առանց ճշմարտութեան. վասն զի յարարչութենէն ոչ ոք գիտէ զժամանակն, բայց միայն յարտաքսելն Աղամոյ ի դրախտէն:

33. Թղ. 136բ—137ա. Ոտանաւոր անխորագիր. «Ողոյն է գլուխն որ են աշխարհն պարսկական, ցուն պարսնոց, որ են կողմանք բարեկական...: Վջ. Զնոյն եւ ի ջուր տեսանես առ ծովական, որք լիանան եւ թերանան նմին նման (այլուր ընծայուած Առաքել Սիւնեցոյ):

Թղ. 137բ—139ա. Գրչէն դատարկ թողուած. Բարսեղ գրիչ 137բ—138ա գրած է «Հաւատով խոստովանիմ» աղօթքին վերջին մասերը (տե՛ս § 3): Ուրիշ գրիչ մը գրչափորձեր ըրած է թղ. 138բ—139ա:

34. Թղ. 139բ—143բ. Դաւթի սրբազան վարդապետի (Քորայրեցոյ) ասացեալ ի ինչորոյ Գրիգորի վեհագոյն վարդապետի որդոյ Տուտայ յաղագս Հակոբակասիրաց ի պատճառս պատուման զատկին. զոր ի ինչորոյն սակս պարզաբար գրեաց նա: Զվեհիզ կատարելագունի յիմաստս...: Վջ. որում ամենայն պատիւ եւ փառատրութիւն վերատրեացի յիմանալի եւ ի սղայուն բանականացս յաւիտեանս. ամէն:

35. Թղ. 144ա—145ա. Կնունք աղայի մանրագիր, երկսիւն, անխորագիր: «Յորժամ կամիցին քրիստոնեայ առնել, պարտ է զայս կարգաւորութիւնս կատարել: Յորժամ ութօրեայ լինի տղայն...»:

36. Թղ. 145բ—159ա. Յաղագս Ժողովոց, արարեալ Արքահամու Հայոց վարդապետի, ընկերակցի Մովսէսի Սորէնացոյ եւ Դաւթի փելիսոփայի, ի ինչորոյ Մահակալ Արծրունոյ մեծի իշխանի. եւ մեր անտի համառատեալ: Արգ սկիզբն եւ առաջին ժողովն որ եղև յաւուրսն փարիսեցոց յաղագս Սաղուկեցոցն...:

Վջ. ԻՆ. Յաղագս Բ. Կոստանդնուպոլ կայսեր: Կոստանդին Բ. ի սորա աւուրն եղև ժողով ի Հոռոմ առ Ագաթոնաւ հայրապետին: Կաւարտի. Կոստանդինս այս Մէթիւ թագաւորացն եւ ի Քրիստոսէ ԶԻ (720) ի Քաղկեդոնէ ՄԽԲ ամ. ի թուականէն Հայոց ճԾԳ (704) ամ: Եւ որ գրեալս է ժողովք ԻՆ.

զոր հաւաքեցաք ժողովք Յունաց եւ Հոռոմայեցոց:

37. Թղ. 159ա. Եւթն հրաշք անուանեալք: Առաջինն Տրիլիթոնեւրապաւլիս, որ է Երեքարեայ: Երկրորդ՝ Կապիտոլիսոլիմ, որ է տաճար ի Հոռոմ...:

38. Թղ. 159բ. Անխորագիր Հարցմունք եւ Պատասխանիք. «Ի՞նչ նուաստութիւն եցոյց Տէրն յիւր յարութիւնն, որ ի մեր յարութեանն չէ լինելոյ: Մի որ զգալի կերակուր եկեր...: Հ. Տաճիք ի համբաւել են թէ մեր զիրս յերկնից յԱստուծոյ է տված...: Հ. Յունաց գիր ո՞վ է արարեալ...: Հ. Յո՞ր ազգէ է Մարիամ...:

39. Թղ. 160բ—161ա. «Ի թուականիս ՊԿԷ (1418) ի հոկտեմբերի ի Ե. ն ի յանուն Աստուծոյ. գիրք որ կայ ինձ այսչափ: (Կը ներկայացնեմ ամբողջութեամբ):

Ա. մէկ աւետարան մի:  
Բ. մէկ աւետարանի մեկնիչ Յոհան գլխոյ Նանաին:

Գ. մէկ նաւոր Նարեկ մի:  
Դ. մէկ նաւոր Նաւմաւս մի առանց կող:  
Ե. մէկ մեծ Կանոնք վարպետին տված:  
Զ. մէկ այլ Նաւմաւս միջակ գիտցանկն ի վերջն:

Է. մէկ այլ Պրոկղի Դիադոխոսի:  
Ը. մէկ Կիւրղի Պարապմանց նաւտարներ Մեղիքսէ:

Թ. մէկ Հաւաքմունք. իմ գրած է:  
Ժ. մէկ Արտաքին Սահմանք եւ Մոկրատ եւ Պերիարմէն. մէկ տուփ ձեռագիր խիստ լաւ ի մէկ:

ԺԱ. մէկ Սաղմոսի Մեկնիչ Ը. Կանոնի վարդանա:  
ԺԲ. մէկ Աւետարանի Մեկնիչ Յոհանու Ժողովածու վարդանա դասի:

ԺԳ. մէկ Երգ երգոցի Մեկնիչ Նարեկալ Գրիգորի:  
ԺԴ. մէկ Բաղդէրբ եւ Գրչութեան խրատ մի:

ԺԵ. մէկ Քարոզգիրք. ախթարմի է:  
ԺԶ. մէկ Կանոնք ծաթգիր:  
ԺԷ. մէկ փոքրիկ Նարեկալ Լուծմունք:  
ԺԸ. Գրիգորի Նիւսացոյ Կազմութեանց:  
ԺԹ. մէկ զեղեցիկ Հաւաքմունք Աւետարանաց:

Ի. մէկ Մեկնիչ Արարածոց Եփրեմի:  
ԻԱ. մէկ Զուկասու Մեկնիչ. Կրկին. Իզնատիոսի եւ Կիւրղի:

ԻԲ. մէկ այլ Իմաստասիրական Պրոկղի:  
ԻԳ. մէկ մեծ Արարածոց Մեկնիչ դասի ժողոված վարդան վարդապետի:

ԻԴ. մէկ Աղուանից գաւազանք:  
ԻԵ. մէկ Եւսեբի Գաւազանք. մազաղաթ ձեռագիր:

ԻԶ. մէկ Լուծմունք Իմաստասիրաց Պերիլիմին:  
ԻԷ. մէկ մեծ Քարոզգիրք լաւ:

ԻԸ. մէկ այլ փոքր նաւտ(ր) եւ Փոսնկի թուխտ:  
ԻԹ. մէկ Հարցմանց:

40. Թղ. 161բ—162բ. (Անխորագիր) Զորս պատճառք են լինելութեան ամենայն մարդոյ. հուր եւ ջուր, աւղ եւ հող: Եւ ի ջերմութենէ լինի ծննդականութիւնն...:

41. Թղ. 162բ. Մանր իմաստասիրական հատուածներ մարդու, հոգւոյ, հրեշտակաց եւն մասին, տեղ տեղ նաեւ հարցմամբ եւ պատասխանով:

42. Թղ. 163բ—164բ. Հ(արցունք). Որպէս գիտացին թէ Շ ասպարէզ է ա. թաւալումն արեգականն. Պ(ատասխանի). Զայս լուծմունք երկրաչափքն հրամանաւ թագաւորացն գիտացին... (Թուի Անանիայի Շիրակացոյ):

43. Թղ. 165ա—168ա. այլ գրչէ. «Պատահական յատկութիւն ընկալան հերեկ(°): տահական յատկութիւն ընկալան հերեկ(°): Եւ զայս Առաջին ստեղծող Աստուած է...: Եւ զայս ճշգրտիւ ճանեաք, զոր... մեկնեաց մեզ աստուածարան բարունին մեր Կախիկն... (Ինչորք վեցօրեայ արարչութեան եւ այլ իրաց շուրջ):

ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 117բ. Քրիստոս Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, ողորմեայ բազմամեղ գրչի Մեծպարոն սուտանուն Սարկաւազի եւ թող զանթիւ մեղս իմ զոր յանցեայ ի մանգութենէ իմէ ցարդ եւս, զի զին եմ անարատ արեանդ քո:

2. Թղ. 138բ. (Հաւատով խոստովանիմ վերջը. տե՛ս § 3). ԶԲարսեղ մեղայաբարտս յիշեցէք յորժամ զպաղատանս մատուցանէք եւ Տէր Աստուած ձեզ եւ մեզ ողորմեցի. ամեն:

3. Թղ. 159բ—160ա. Ի սորբին լուսանցս. «Քաղաքն Կիւրոսի, մեծապատիւ առաջնորդ տեսն Դիոնիսիոսի եպ. արհ. 1818. ի հայրապետութեան սրբոյ էջմիածնի տեսն Եփրեմի, Երուսաղէմա թէոզորոս, Կոստանդնուպոլսոյ Պօղոս:



լեան կու լինա...: ՎՋ. խըմբի, աղբապի, պալասի:

8. Թղ. 172ա—173ա. Յաղագս Աստուած-պաշտութեան: Չաստուածպաշտութեանն յօրինակ երից իրաց յուսուցանէ գոլ աստուածարան մարգարէն Նսայի...: ՎՋ. Ահա-լասիկ են ի հաւատամբն, թող ի միտ ասծիցէ:

9. Թղ. 174ա. Յառաջարան Յայտնութեանն Յոհաննու աւետարանչին: Սրբոյ աւետարանչին Յոհաննու է գիրքս որ կոչի Յայտնութիւն, զոր ետես մարգարէական աս-չօք...:

10. Թղ. 174բ. Գիրք Յայտնութեանն Յոհաննու: Յայտնութիւն Ս. Յոհաննու աստուածարանին որ եղև առ նա ի ձեռն հրեշտակին, զի ետես զՏէր ի մէջ ոսկի ճրագարանացն զգեցեալ պճղնաւորն...:

11. Թղ. 176ա—192ա. Յայտնութիւն Ս. Յոհանի աստուածարանի: Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի ի ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոյ որ ինչ լինելոյ է վաղվաղակի եւ նշանակեաց առաքելով ի ձեռն հրեշտակի իւրոյ առ Ոհաննէս ծառայ իւր, որ վկայեաց զվկայութիւն բանին Աստուծոյ...:

12. Թղ. 192բ—268ա. Ասկէ սկսեալ ուրիշ գրչէ: «Կեմպացոյ Թոմայի կրօնաւորի աշակերտի սրբո Օգոստինոսի երեց գիրք վասն Հեռեմանց Քրիստոսի: Չոր եւ թարգմանեաց ոմն վարդապետ ի կարգէ Յիսուսեանցն ի հէլէն բարբառէ ի մերս ի Բերայ թվին Հայոց ՌՂԶ (1647): (Յառաջարան թարգմանչին) Բարեմիտ եւ աստուածասէր ընթերձող, ծանիր զի է սա ոսկիակերտ եւ լուսաբեր գիրք...:

Բ. Յաղագս Հեռեման Քրիստոսի. յառաջին Գիրք: Վասն հոգեւոր կենացն օգտակար յիշեցմունք: Գլուխ յառաջին. ուր ասէ. Ո՞ր գինի, ո՞ր գեւայայն (°): Որ գայ զինի իմ ի խաւարի մի մնացէ: Այս են յիշեցմունք զոր կոչեաց զմեզ Տէր. արգ հեռեւսցուք բարուց եւ կենցաղավարութեան նորա...: ՎՋ. եւ ընթակցութեամբ շնորհաց քոց յուղեւորեա ճանապարհաւ խաղաղութեան առ գաւառ մշտնջենաւոր փառատրութեան. ամէն:

Գ. Թղ. 268բ. Հնարագիտութիւն Գրոցն վասն Հեռեմանց Քրիստոսի: Վասն զի այս

գիրք չունի ինչ որ կարիցէ փաստակար գովումեք...:

Գ. Թղ. 269բ—271բ. Յանկ յառաջին (եւ Բ. եւ Գ.) գրոցն:

13. Թղ. 272ա—343. Գիրք յաղագս Մուրութեանց: Պատմեա ժողովրդեան իմոյ...:

Բ. Թղ. 340բ. Եւ ասա երեւեցան նշանք յերկինս: Եւ վիշապն մեծ ունէր գլուխ է...: Որպէս ասէ առաքեալն զի ոչ է մեզ պատե-րազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան...:

14. Թղ. 344ա. (Բարդողիմեայ) Քարոզ գեղեցիկ: Այր ոմն էր մեծատուն...: Իմաստունքն ասեն, թէ է ակն ինչ որ կոչի տպա-զրոն...: Վիեննա, 312, թղ. 343բ:

15. Թղ. 345ա. (Բարդողիմեայ) Այլ քարոզ պատուական: Եւ այր գործեաց ընտրիս...: Ասեն իմաստունքն թէ է ակն մի որոյ անուն կոչի ազաթէս...: Վիեննա, 312, 354ա:

16. Թղ. 347բ. (Բարդողիմեայ) Քարոզ գեղեցիկ: Եթէ ակն քո գայթակղեցուցանէ զքեզ...: Վարդապետք ասեն, թէ Ս. Աստուածածինն նման է առաւօտին...: Վիեննա, 312, թղ. 358բ:

17. Թղ. 348բ. (Բարդողիմեայ) Այլ քարոզ. Նախերգանք: Ճրագ մարմնոյ ակն է...: Գ. Թագ. Գ. Կին մի աղաղակէր առ Եղիսէ...: Վիեննա, 312, թղ. 365ա:

18. Թղ. 349ա. Քարոզ փոխմանն է: Եւ նշան երեւեցաւ յերկինս...: Չողաւ Դաւիթ եւ եհան գտապանակն...:

19. Թղ. 352բ. Այլ քարոզ անվերնագիր:

20. Թղ. 356ա. Քարոզ Համբարձման Տեան մերոյ յերկինս: Յորժամ բարձրացայ յերկրէ...: Աստ գիտելի է զի սուրբ եկեղեցին...:

21. Թղ. 358ա. Բացայայտութիւն Ս. Յովհ. Ոսկերբանին: Սկիզբն ամենայնի Աստուած է. եւ ի նմանէ սկիզբն ամենեցուն: Եւ որպէս Պետրոս գերանելի խոստովանութիւնն բղխեալ լեզուաւ իւրով...:

22. Թղ. 360ա. Ղուկասու Աւետարանին Մեկնութենէ: Այր մի իշանէր յերկրով...: Արդ յորժամ արար Աստուած զերկինս եւ զերկիր...: Վերջը թերի, թղթեր ինկած ըլլալով: Ճառս Վիեննա, 1, թղ. 174բ ընդ-ծայուած է «Սեւերիանոսի ուղղափառի». եւ հրատարակուած է ի շարս Սեւերիանոս Գա-րդաղացոյ ճառերուն, Վենետ. 1830, էջ 202-204:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա. Մասի վերջը, թղ. 192ա. «Գրեցաւ հեծեծանեաւք ասացի եւ այժմ սկ(ս)ա(յց), թէ թիւ ձն. (Երկու գրերուս վրայ մի մի կէտ, նշան ջնջման). ՌՃԱ. (1652) փետրավար:

(Շարունակելի): 2. Ն. ԱԿԻՆԵԱՆ

### Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen

(Eine Untersuchung der indogermanischen Bestandteile des armenischen Wortschatzes)

Dr. Georg Solt a (Fortsetzung.)

#### GRUPPE B:

#### Wörter, zu denen sich Verwandtschaftsbeziehungen in der Mehrzahl der anderen idg. Sprachen finden:

38. Թար t'ar, t'ari „Stange zum Trocknen von Weintrauben und anderen Früchten“, „Stelle, wo die Hühner die Nacht verbringen“, t'aram, t'aršam „welk“, t'aramim, t'aršamim „welke“. Hübschmann AG I 442; Walde-Pokorny I 737; Lidén A St 45f.; Pedersen KZ 39 (1906) 371. Adjarian II 1134. Hier haben wir die Vertreter der idg. Wurzel \*ters- „trocknen, verdorren, dürsten“ vor uns. Die Wurzel fehlt im Balt. Slav. und im Heth. Toch., soweit wir bis jetzt sehen. Das arm. t'ar entspricht formell genau dem griech. τρασία „Darre“ und wohl auch dem ahd. darra „Gestell zum Dörren von Obst“, nschwed. tarre „Raum zum Trocknen unter dem Dach des schwedischen Bauernhauses“<sup>17</sup>. Hier liegt also eine interessante arm.-griech.-germ. Isoglosse vor. Bei dem Adjektivum und Verbum ist es dagegen nicht möglich, engere dialektische Beziehungen des Armenischen festzustellen. (Es gibt beim Verbum sehr verschiedene Typen, wie aus folgenden Beispielen erhellt: gr. τέρσομαι „werde trocken“, alb. ter „trockne an der Luft“, lat. torreo „röste“, got. gabaürsnan „verdorren“, ai. tṛsyati „dürstet, lechzt“).

<sup>17</sup> Lidén a. a. O. 46 sagt über schwed. tarre und arm. tar. „... offenbar nahe verwandte Dinge. Ding wie Name sind gewiß urzeitliches Erbgut.“

38a. Թումբ t'umb „Damm (an einem Fluß)“. Dieses Wort fehlt bei Hübschmann und in den gangbaren etymologischen Wörterbüchern. Adjarian II 1305 sieht darin eine m-Ableitung von der Wurzel \*teu/\*tu-, wie sie etwa vorliegt in ai. tumbah „Flaschengurke“, tumrah „strotzend, feist, derb“, lat. tumeo, -ere geschwollen sein“, tumulus „Erdaufen, Erdhügel“, kymr. twf „Kraft“, aisl. humall, ahd. dumo „Daumen“, gr. τύμβος „Grabhügel, Erdhügel“, mir. tomm „kleiner Hügel“, kymr. tom „Erdhügel“.

Die Bedeutung des armenischen Wortes ist zwar einigermaßen isoliert, läßt sich aber doch wohl mit gr. τύμβος und mit den kelt. Wörtern vereinen. Auch die formale Ähnlichkeit ist mit diesen Wörtern am nächsten. Wie gr. τύμβος „unsicher, wankend“ neben a.m. t'ambir „Benommenheit“ steht (cf. unten C 30), so verhält sich ein τύμβος „Hügel“ zu arm. t'umb „Damm“. Die Übereinstimmung ist also auch hier wieder zwischen Armen. und Griech. am größten<sup>18</sup>.

39. Թուք t'uk „Speichel“, t'kanem „spucke, speie aus“. Hübschmann AG I 449 f.; Walde-Pokorny II 683; Bugge KZ 32, 39; Walde-Hofmann II 581; Adjarian II 1325. Das Wortmaterial aus den verschiedenen Sprachen zeigt kein einheitliches Bild: ai. śthivati „spuckt“, avest. spāma „Speichel“, griech. πτύω „spucke“, πτύαλον „Speichel“, lat. spuo, -ere „spucke“, got. speiwan, ahd. spiwan „speien“, lit. spiūju, spiūti „speien“, abg. pljuje, pljivati „ds.“. Man hat das arm. Wort wie auch die iranischen Belege (osset. teu, npers. tuf, tuk „Speichel“) als lautmalend auffassen wollen; cf. W. Schulze KZ 45 (1913) 95 = Kleine Schriften p. 57. Den Versuch einer lautgesetzlichen Erklärung macht Bugge a. O. Die Vertretung von gr. πτ- durch arm. t' ist uns oben begegnet (Nr. A 13 s. v. t'it'ern). Es ist klar, daß sich nur auf dieser Basis eine dialektologische Folgerung ziehen ließe, nämlich die einer griech.-arm. Sonder- und

<sup>18</sup> Die kelt. Wörter, ir. tomm und kymr. tom „Hügel“ sind wohl mit Walde-Pokorny I 708 unmittelbar dem gr. τύμβος gleichzusetzen und nicht auf ein \*tum-g<sup>h</sup>o- mit einem ganz unsicheren Suffix zurückzuführen, was man dem ai. tuṅgaḥ „hoch; Anhöhe“ zu- liebe getan hat (so auch Walde-Hofmann II 716).